ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՏԵՐՅԱՆ

# ԱԿԱՄԱ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՔ

## Տ. ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ ԺԵ. ԱՂԱՋԱՆՅԱՆ ԿԱՐԴԻՆԱԼԻՆ

## ԻՐ ՀՈՎՎԱԿԱՆ ԹՈՒՂԹԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ[1]

«Խիստ է քեզ ընդդէմ խթանի աքացել»:
(ԳՈՐԾՔ ԻԶ. 14)

*Տ. Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաջանյան Կարդինալը, իր 1947 և 1950 տարիներու հովվական թուղթերով, զուտ ջան և ընդունայն վաստակ ի գործ կդնէր, սրտցավօրէն արտահայտվելու Հայ Եկեղեցվո կարծեցյալ մոլորությանց և թերությանց մասին, որոնց պատմական ու կրոնական շահեկանությունը շատոնց վերջացած է, հաճախ ըսված ու գրված ըլլալով արդէն կարևորը այդ մասին։*

*Իբրև ազգասէր Հռոմեադավան, Նորին Սրբազնության վիշտն ու բարեմտությունը այնքան մեծ է Հայ Եկեղեցվո իր մոլորյալ արենակիցներուն նկատմամբ, որ զիրենք ուղիղ ճամբան առաջնորդել կարենալու համար, նույնիսկ թույլ կուտա ինքզինքին սրբագրելու և ի հարկին ձևագեղծելու Ավետարանի և մեր սրբազան հայրերու արտահայտությունները, և ասիկա ի շահ և հօգուտ իր մոլորյալ ազգի զավակներուն, և ի փառս Հռոմեական Եկեղեցվո. ի վերջո նպատակը պետք է արդարացնե միջոցը։*

*Նոր չէ եղանակը, սակայն նոր է զայն նվազել փորձողը։ Հետևաբար նոր գյուտեր պիտի չըլլան մեր ալ ըսածները այս առիթով, Հայ Առաքելական Ս. Եկեղեցվո հակառակորդներու դեմ։ Որքան ատեն անոնք չեն հոգնիր անպատշաճ և անօգուտ հարձակումներով նորոգելու հերքված առարկությունները և կրկնելու անճիշտ վկայություններ, անարգելու և անավագելու համար Հայ Եկեղեցին, մենք ալ մեզի պարտք կնկատենք, հանուն ճշմարտության, պաշտպանել մեր Եկեղեցին, արգիլելու համար այն կարկամ ձեռքերը, որոնք կփորձեն մուր քսել անոր դարավոր մարտիրոսության սպիներով պսակազարդ ճակատին։*

*...Մեզի այլևս զարմանք չի պատճառեր, որ Աղաջանյան Կարդինալի նման դիտուն և բարձրաստիճան եկեղեցականներ անգամ՝ անկատար հոգիով մոտենան կրոնական հարցերու, ծառայեցնելով Քրիստոսի Եկեղեցին քմահաճ շահագիտությանց, պղտորելով այն վճիտ սերը, որ հիմն է Ավետարանին։ Փոխանակ քրիստոնեության վսեմ ու գեղեցիկ ոգին տարածելու հավատացյալներու մեջ, փոխանակ մարդուն ներշնչելու այն ազնիվ զգացումները, զորս Ավետարանը մեզի բուռ-բուռ կբաշխե իր անսպառ գանձարանեն, զանոնք սուրերու վերածած մեր կողը խրել կջանան քրիստոնեությունը ամեն օր նոր նվաստացումներու տանող մեր օրերու Կայափաները։ Տակավին՝ այդ գեղեցիկ ոգին փոխարինելով սին ու սնափառ հանգանակներու, որ ուրիշ բան չէ, բայց նախատինք քրիստոնեության և անոր երկնավոր հիմնադրին։*

*Կարդինալ Աղաջանյանի զույգ թուղթերը կարգ մը ընդհանուր, ջատագովական և սովորական արտահայտություններեն հետո, որոնք նման գրություններու կազմին տարրերը կրնան նկատվիլ, կուգան ու կհանգին*

---

*1. Եղիշե Վարդապետ Տերտերյանի ներկա «Ակամա անդրադարձությունքը» տպագրված է առանձին գրքույկով, որից մենք արտատպում ենք, փոքր ինչ կրճատված ձևով։—ԽՄԲ.։*

իր մտասեռումը կազմող հարցին, եկեղեցվո ընդհանրականության, առաքելականության, ուղղափառության և նման բազմաթիվ անդամներ ծեծված ու ծամծմված խնդիրներու, ըսելու համար թե միա՛յն Կաթոլիկ եկեղեցին է ճշմարիտ, ուղղափառ և իրավ, իսկ Հայ եկեղեցին հերձվածող, ուծացած ու անճիշտ։ Հետո իր հայրական «գթառատ» բազուկները բացած Հայաստանյայց եկեղեցվո մոլորյալ զավակներուն, կոչ կուղղե անոնց, որ դան ու միանան Հռոմեական եկեղեցիին։ Իր կորստյան զառիթափին վրա կեցած Հայ Ազգին ու եկեղեցիին նվիրված այս որբը, արժանի պիտի նկատեինք «ողբ հայրենասերի» տիտղոսին, եթե անկեղծ ըլլար ան իր զգացումին՝ և իրական՝ իր սկզբունքներուն մեջ։

...Հովվական Թուղթին հեղինակը գիտե անտարակույս ընդհանուր և Հայ եկեղեցվո պատմությունը։ Գիտե թե Քրիստոսի եկեղեցին մի էր ո՛չ անոր համար, որ այա կամ այն եպիսկոպոս կճանչնար իրեն գլուխ կամ պետ, այլ որովհետև ամեն տեղ առաքելական քարոզությամբ հաստատված եղեղեցիներ միևնույն հավատք կդավանեին ի Տեր։ Մի էր Երուսաղեմի եկեղեցին՝ ուր քարոզեց նույնինքն Հիսուս, Անտիոքի եկեղեցիին հետ՝ ուր քարոզեց Պետրոս, մի էին Կորինթոսի, Իկոնիո կամ Հռոմի եկեղեցիներ՝ ուր քարոզեց Պողոս, Եփեսոսի եկեղեցիին հետ՝ ուր քարոզեց Հովհաննես։ Այսպես նաև մյուս բոլոր եկեղեցիներ, ուր ըստ պատմության կամ ավանդության քարոզեցին առաքյալներ կամ անոնց հաջորդներ։ Այս միությունը որևէ առաքյալով մը պայմանավոր չէ, այլ ուղղակի քրիստոնեական կրոնի վարդապետությունն կառնե իր ծագումը։

...Գալով Հայաստանյայց Եկեղեցվո նախնական անկախության խնդրին, որուն դեմ նոր չէ Հռոմի և իր արբանյակներու անհանդուրժողությունը, առանց ազգային նախապաշարումներու կոթնած ըլլալու, պատիվ կզգանք հայտարարել թե Գրիգոր Լուսավորչի քարոզությամբ երբ Հայ եկեղեցին անգամ մը ևս կճոխանար ու կպայծառանար, ոչ Հռոմի Պապեն թույլատրված էր ան և ոչ Կայսրադավկիացվոց Կեսարիո արքեպիսկոպոսի սահմանումով բազմաբարյար Հայրապետը կլծեր ինքզինքը այդ առաքելության։ Հայ ավանդին և ժողովուրդը լոկ փափագ ունեցան «հովիւ կացուցանել» զինքը, որովհետև Հայոց աշխարհի եպիսկոպոսը (հավանաբար Մեհրուժան) զոհ գացած էր այն հալածանքին, զոր Մեծն Խոսրով հարուցած էր վերջին տարիներուն մեջ։

Գալով այն ձեռնադրության, զոր Սուրբ Գրիգոր ընդունեց Ղեոնդիոս արքեպիսկոպոսեն, որևէ հպատակություն հանձն առած չէր կրնար ըլլալ, վասնզի այն աշխարհը, որուն մետրապոլիտ կամ կաթողիկոս կդարձվեր Լուսավորիչ, արդեն ունեցած էր նախապես իր քահանայական ձեռնադրության շնորհը Թադեոս առաքյալին միջոցավ, բայց դժբախտ պատահարներ գուցե ժամանակվան մը համար խլած էին նվիրապետական այդ շղթան և այս անգամ քահանայապետության պարզ եռոգում մըն էր միայն և այն ստիպողաբար առաջ եկած։

Իսկ գալով այն անհիմն առարկությանը թե արդյոք Հայաստանյայց եկեղեցվո անկախությունը ծախվեցա՞վ երբեք ուրիշի մը, այսինքն թե Լուսավորիչը դրավ զայն Հռոմի Սեղբեստրոս Պապին գավազանին ներքև։ Եթե այդպիսի հպատակություն մը դաշնադրված էր արդեն՝ ի՞նչ պատրանք մեր նախնյաց համար՝ որոնք իրենց ներքին անկախությունը ապահովելու կնկրտեին.— անոնց միտքեն շատ հեռու էր կասկած մը իսկ ունենալ ատոր մասին, զի Լուսավորիչ ոչ իսկ երբեք խորհած էր Թադեոսի առաքելական վիճակը վանառել Ս. Պետրոսի աթոռին. պատմական կեղծիք մըն էր այդ՝ զոր հերյուրեցին Հռոմի գերագույն գահին շլացող միտքեր, որոնցմե մեկն էր Դաշանց Թուղթի հորինիչը։ Սակայն թողունք առասպելները՝ որոնց հետ քիչեր միայն կրնան հաշտվիլ՝ և իջնենք պատմության հաստատուն գետնին վրա։

... Մանծաղամիտ և բռնազրոս ճիգ է հայտարարել թե հռոմեադավան եղած է Ս. Գրիգոր Լուսավորիչը և իրմով բովանդակ հայ ժողովուրդը։ Այս հավաստումը ուրիշ բան չի նշանակեր, բայց անտեղյակ լինել Հայ եկեղեցվո պատմության և ավանդության, ցատկելով նախ Հայաստանյայց եկեղեցվո երեք դարերու վրայեն, մոռնալու և ուրանալու աստիճան անոր առաքելական ծագումն ու առաքելական հաջորդությունը, անդիտանալով Թադեոսի և Բարթողիմեոսի քարոզության պտուղն ու արդասիքը եղող Հայ եկեղեցին, երբ գիտենք թե անոնք են մեր եկեղեցվո հիմնադիրները, Պետրոսի ընթացակիցք և առաքելակիցք ու հավասար իշխանությամբ։ Ս. Գրիգոր Լուսավորիչը Դ. դարու սկիզբը անոնց ցանած սերմը աճեցնող մըն է լոկ։ Արտաշատ և Սյունյաց աթոռներու եպիսկոպոսներն ալ հիշյալ զույգ առաքյալներու ճշմարիտ հաջորդներն էին։ Սակայն Հռոմեադավանները սկիզբեն ի վեր այս իրողությունները ընդունիլ չեն ուզեր, Աղաթանյան Կարդինալին հետ հայտարարելով՝ Լուսավորիչը Հայոց եկեղեցվո հիմնադիր և իր իշխանությունը առած Սեղբեստրոս Հայրապետեն։ Հայ եկեղեցվո հիմնադիրն ու ա-

ռաջին լուսավորիչները եղած են Թադեոս և Բարթողիմեոս առաքյալները, Հայ Եկեղեցին մաս կազմե Հիսուս Քրիստոսի մի, ընդհանրական, առաքելական Սուրբ Եկեղեցվույն, ըլլալով ամենեն վավերական անդամը Քրիստոսի տիեզերական Եկեղեցիին քանիվ և գործով, իրավամբ և արդյամբ։

Վասնզի այն բոլոր Եկեղեցիներ, որոնք կընդունին տիեզերական երեմ առաջին ժողովները և կդավանին անոնցմե խմբագրված ու հաստատված Հավատամքը, նույնինքն Հավատամքի մեջ ստորագրված մի, ընդհանրական և առաքելական Սուրբ Եկեղեցվույն մեջ են։ Եվ քանի որ Հռոմի Եկեղեցին չուզեր ճանչնալ միության, ընդհանրականության և առաքելականության այս պատմական սահմանը, և միայն ինքզինք մի, ընդհանրական և այլն կկարծե, ատով իսկ կանջատե և կմեկուսացնե ինքզինքն այդ մի և ընդհանրական Եկեղեցիեն. վասնզի Եկեղեցի մը ուշափ այ մեծ և զորավոր ըլլա, առանձին չի կրնար ներկայացնել Նիկիական Հավատամքի մեջ ստորագրված Եկեղեցին։

Ցավալի է, որ Հռոմեական Եկեղեցվույն հարած մեր հայ եղբայրները, մանավանդ այժմու անոնց առաջնորդ Գերապայծառ Աղաջանյան Կարդինալի նման պատմության գիտությամբ և աստվածաբանությամբ ճոխացողներ, պատմության այս սահմանագլուխին վրա արձանացող իրողությունները չեն ուզեր տեսնել, այլ կշարշարեն պատմության փաստերը, ըսել ուզելու համար թե, Լուսավորչեն սկսյալ մինչև Ներսես Շնորհալի և Հայաստանյայց Եկեղեցվո բոլոր նշանավոր հայրապետները ուղղափառ «կաթոլիկ» եղած ըլլան։ Այսպես ըմբռնած են իրենք և աշխատած են այսպես ալ ներկայացնել Հայաստանյայց Եկեղեցին՝ Զամչյանեն սկսյալ մինչև Կարդինալ Աղաջանյան, հայ կաթոլիկ հեղինակներն ու ներկայացուցիչները։ Զարմանալի իրականություն սակայն, եթե Լուսավորչեն մինչև Շնորհալի, Հայաստանյայց Եկեղեցվո բոլոր նշանավոր հայրերն ու հայրապետները «կաթոլիկ» եղած ըլլային, ի՞նչպես հայ ազգին մեծամասնությունը իր Եկեղեցիով հայ մնացած է։

... Հռոմի Եկեղեցին իր հին ըմբռնումով կապրի տակավին, կարհամարհե ինչ որ իրմե չի բխիր, ինչ որ իր կամքով ըլլար քրիստոնեական աշխարհի մեջ, և բոլոր մյուս Եկեղեցիները կնկատե իրրև բաժանյալ, իրրև ոչ ուղղափառ և այլն և այլն, և այսպիսի անհանդուրժելի այլամերժությամբ գինված Եկեղեցի մը դեռ կսպասե, որ մյուս Եկեղեցիները միանան իրեն։

Վատիկանը իբրև փարախ փրկության մատնանշելու պետք չունիք, Շնորհաղա՛րդ Կարդինալ, վասնզի «Պետրոսի վրա» հիմնված Եկեղեցին, դժբախտաբար, կորսնցուցած է քրիստոնեական Եկեղեցիներ առաջնորդելու իր հմայքն ու իրավունքը, անոր համար, որ ուրացած է ուրիշ Եկեղեցիներու իրավունքը, անոր համար, որ կուզե ծանրության կեդրոնը ըլլալ միս-մինակ, անոր համար, որ ո՛չ միայն կրոնական ըմբռնումները հավատացյալներուն, այլ նաև խորհելու ազատությունը ուղեղներուն՝ Վատիկանի հակակշռին ներքև է դրված։

Եվ հայ ժողովուրդի նկարագրին տեսակետեն միայն նայելով խնդրին վրա, պիտի ըսենք թե մենք շատ բան դիջած ենք մեր գոյության ընթացքին, բայց չենք ուզած ծախել մեր միտքն ու խիղճը իր ամբողջությանը մեջ, և ճիշտ այդ պատճառով ալ միշտ հավատարիմ մնացած ենք մեր Մայրենի Եկեղեցիին, որ իր կարգին հավատարիմ անդամը մնացած է և կմնա տիեզերական առաջին երեք ժողովներու հավատքով, Հիսուս Քրիստոսի մի, ընդհանրական, առաքելական և սուրբ Եկեղեցվույն։

***

Գալով այն առեղծվածային հայտարարության թե Քրիստոսի Եկեղեցին Պետրոսի վրա հիմնված է, և հետևաբար իրական քրիստոնյա և հավատացյալ ըլլալու համար պետք է Հռոմի Եկեղեցիին մաս կազմել, ոչ միայն քրիստոնեական Եկեղեցվո վարդապետության, ոգիին և ճշմարտության, այլ նաև ողջմտության հակառակ է, ենթադրելով թե Եկեղեցին Պետրոսի վրա շինված կրնա ըլլալ։ Մինչդեռ ավետարաններ և Նոր Կտակարանի մյուս բոլոր դիրքերը կվկայեն թե քրիստոնեական Եկեղեցվո միակ հիմը և դլուխը ինքն Քրիստոս եղած է, և Եկեղեցվո մեջ բուն հիմեն զատ ուրիշ հիմ մը ստեղծելը միայն Հռոմեական Եկեղեցվո հատուկ կրնա ըլլալ։ «Զի հիմն այլ՝ ոք ոչ կարէ դնել քան զեղեալն՝ որ է Յիսուս Քրիստոս» (Ա. Կորնթ. Գ. 11)։ Եկեղեցին Պետրոսին չէ, Շնորհաղա՛րդ Կարդինալ, այլ Քրիստոսի, և սուրբ հակառակ ինքնահնար վարդապետությունը դուրս է ոչ միայն Նոր Կտակարանի ոգիեն, այլ նաև Ա—Ե դարերու ճշմարիտ, ընդհանրական և միասնական ուղղափառ Եկեղեցվո դավանութենեն։ Նման կարծիք մը, առավելաբար քաղաքական և մենատիրական ձգտումներե բխող, մերժված է միշտ Արևելյան հնագույն բոլոր Եկեղեցիներեն, և որ բաժանումի ու պառակտման պատճառ եղավ

Արևմտյան Եկեղեցիներու մեջ։ Ժամանակին այդ հասկացողությունը իզուր չանաց իրեն ի նպաստ սերմեր որոնել Ավետարանին մեջ, իր կամավոր հասկացողություններով և տկար պատճառաբանությամբ, և Հռոմեական Եկեղեցվո շրջանակեն դուրս քրիստոնյա ոչ մեկ Եկեղեցի կրցավ հանդուրժել նպատակավոր եղած այս խեղաթյուրումներուն։

Հովվական թուղթերուն հեղինակը անդամ մը ևս կճգնի ցույց տալ թե մեր Եկեղեցվո Ս. Հայրերը ճանչցած ըլլան զայն և իրենց գրություններու մեջ դավանած։ Մեր Եկեղեցվո հայրերը չէին կրնար ինքնահնար վարդապետություններու դավանանքներ ընդունիլ, երբ Քրիստոս այդպես ըսած չէր և առաքյալները այդ վերպ քարոզած չէին։ Նոր Կտակարանը իր ամբողջությամբ և քրիստոնեական Եկեղեցվո պատմությունը իր հնությամբ մեզի ցույց կուտան թե թյուր և կամայական է Պետրոսի առաքելական պաշտոնը առաքելականեն վեր աստիճանի մը բարձրացնելու ճիգը։

Մատթեոսի Ավետարանին (Մատթ. ԺԶ. 16—19) այն հավաստումը, զոր բոլոր առաքյալներու կողմեն արտասանեց Պետրոս, թե «Դու ես Քրիստոսն՝ Որդի Աստուծոյ կենդանւոյ. որու Հիսուս պատասխանեց, «Երանի քեզ Սիմոն որդի Յովնանու, զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ, այլ Հայր իմ որ յերկինս է։ Եւ ես քեզ ասեմ, զի դու ես վէմ, և ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց զնա մի՝ յաղթահարեսցեն։

Քրիստոս հոս պարզապես հանվանե կոչած է զՊետրոս. «Դու ես Պետրոս» ինչպես հույն բնագիրը ունի, ուր հասկնալ ուզողին համար որոշ կերպով կտարբերին Պետրոս և Պետրա արական և իգական անունները։ Պետրոսի անունին փոխարերական առիթը պետք չէ շփոթել իրականության հետ։ Ո՞ր վեմին վրա պիտի շիներ Քրիստոս իր Եկեղեցին, Պետրոսի՞ թե անոր հավատքի վեմին վրա, թե «Դու ես Քրիստոս կենդանի Աստուծո Որդին»։ Հետո Պետրոս իր թուղթին մեջ բացահայտ կերպով կհայտնե թե ինքն Քրիստոս է «վէմ կենդանի» և «վէմ ընտիր, գլուխ անկեան պատուական» (Ա. Պետ. Բ. 4—6)։ Ուրեմն քրիստոնեական Եկեղեցին կենդանի Աստուծո Որդվույն՝ Քրիստոսի վրա է հիմնված, այլապես շատ փոքրացած պիտի ըլլար, եթե մահկանացու էակի մը վրա շինված ըլլար։ Ավետարանի նույն հատվածին մեջ կգտնենք, որ Պետրոս «Սատանայ» կկոչվի (Մատթ. ԺԶ. 23)։ Անոնք, որ անումներու և կոչումներու վրա խաղալ կփորձեն, ինչո՞ւ չեն եզրակացներ թե հետևաբար Եկեղեցին սատանայի վրա հիմնված է. բայց մեզ քա՛վ լիցի նման անձա՛ն և հիմարական պատճառաբանություններու և մեկնություններու վրա կազալ, այդ սրբապղծությունը անոնց անկ է միայն, որոնք չեն զլարիր Եկեղեցին աթոռներու վերածելու, իրենց իշխանավորներուն բարձրությունը ապահովելու համար։

Շնորհազա՛րդ Կարդինալ, ինչպես մեր, այնպես ալ կխորհիմ թե Զերդ Սրբազնության վրա պարտք կիյնա Ավետարանի ոգին ճիշտ ըմբռնել, որ Քրիստոսի ոգին է։ Քրիստոսի առաքյալներուն մեջ մեծ ու պզտիկ չկար, այլ ամենքը հավասար էին։ Պետք չէ մոռնալ, որ երբ առաքյալներուն մեջ մեծության և առաջնության խնդիր ծագեցավ, Քրիստոս անոնց մեջեն իսպառ հեռացուց այդ մտածումը։ Եթե Պետրոսին միայն տրված ըլլար գերագահության իրավունքը, պիտի չըսեր մեր Տերը «Ամէն ասեմ ձեզ, զոր կապիցէք յերկրի, եղիցի կապեալ յերկինս, և զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս» (Մատթ. ԺԸ. 18)։ Հիսուս իր ամբողջ քարոզության շրջանին հավասարապես հրահանգեց իր առաքյալները։ Գերիշխան լինելու փափագին մերժումը կերևի նաև Զեբեդյան որդիներու պարագային, երբ անոնք աշխարհիկ մտածումներով աթոռներ և դիրքեր խնդրեցին։ «Նստիցիք յերկոտասան աթոռ, դատել զերկոտասան ազգն Իսրայէլի» (Ղուկ. ԻԲ. 30)։ Եթե տասներկուքին աթոռները հավասար են, տ՞ւր է Պետրոսի տարբեր աստիճանի աթոռը։

Ոչ միայն Ավետարանը այսպես կվարդապետե, այլ նաև Պողոսի և Պետրոսի թուղթերը ընդհանուր Եկեղեցվո գլուխ ու հիմ կնշանատեն զՔրիստոս։ «Եւ նա է գլուխ մարմնոյ Եկեղեցւոյ, որ է սկիզբն անդրանիկ ի մեռելոց, զի եղիցի ինքն յամենայնի յառաջագայն» (Կողոս. Ա. 18)։ Եկեղեցիի շենքին հիմը Քրիստոս է (Ա. Կորնթ. Գ. 11)։ Ահա առաքելական դարու վարդապետությունը, որ մերմը եղած է ամբողջ քրիստոնեության։ Բոլոր առաքյալները այս սկզբունքով ընթացան և այդ կերպով քարոզեցին զՔրիստոս։ Պետրոս առաքյալ երբեք իր մտքեն չանցուց թե ինքն է վեմն անկյան Եկեղեցվո, երբ հետևյալ տողերը գրեց. «Եւ որ մատուցեալ, ի վէմն կենդանի, որ թէպէտ ի մարդկանէ անարգեալ, այլ առ ի Աստուծոյ ընտրեալ և պատուական էր» (Ա. Պետ. Բ 4)։

...Առաքելական դարեն վերջ ընդհանուր Եկեղեցվո հին հայրերը, բոլորն ալ ողջմիտ մեկնություններով դիմավորած են ավետարանական և առաքելական այս բացատրությունները։ Արևելյան Եկեղեցվո հայրերեն Եվսեբիոս Կեսարացին, Աթանաս Աղեքսանդրացին, Բարսեղ Կեսարացին, Հովհան Ոսկեբերան, Գրիգոր Նյուսացին, Գրիգոր

Աստվածաքան, Կյուրեղ Աղեքսանդրացին, իսկ Արևմտյան եկեղեցվո հայրերեն Տերտուղիանոս Ափրիկեցին, Կիպրիանոս Կարկեդոնացին, Ամբրոսիոսն, Օգոստինոս Հիպպոնացին և ուրիշներ, որոնց վկայություններ այս կարգի նյութերու հատուկ բոլոր առձեռն դիրքերու մեջ կարելի է գտնել, ամենքն ալ իրենց գրություններու մեջ վեմ բառով Քրիստոսը կհասկնան և ոչ թե Պետրոսի անձը։ Իսկ Հռոմի հայրապետը երբեք ընդհանուր եկեղեցվո միակ գլուխը նկատած չեն, այլ միայն առաքելական աթոռներու գահակալներեն մեկը, նման մյուս հայրապետներուն։

...Տակավին՝ քանի որ եկեղեցին է տեղն ու բնակարանը ամեն ժամանակներու և բովանդակ մարդկության, Ադամեն սկսած մինչև ցկատարած աշխարհի, անհնար է, որ մարդ մահկանացուն վեմ հաստատության կամ գլուխը լինի մշտնջենավորին։ Քանի որ եկեղեցին է մի հոգևոր զինվորություն, մի հոգևոր սպառազինություն աշխարհի չարության և խավարին դեմ, մոլորության և ստության դեմ, ուրեմն Քրիստոս է միակ զորագլուխը այս հոգևոր պատերազմին և ոչ թե մարդ մահկանացուն։

Եթե այս է իրողությունը, որուն հակառակ չեմ կարծեր թե կարենաք մտածել, Շնորհազա՛րդ Կարդինալ, ի՞նչ է ուրեմն Ձեր պահանջը մեզմե։ Մեզի Քրիստոսեն Քրիստոսի՞ կհրավիրեք, թե ոչ Քրիստոսեն Պետրոսի։ Եթե Քրոստոսի կհրավիրեք, Հայաստանյայց եկեղեցվո զավակները արդեն կճանչնան ու կդավանին զՅիսուս Քրիստոս, Որդի Աստուծոյ կենդանւոյ, որ է վեմ հաստատութեան եկեղեցւոյ և գլուխ կենդանարար։

Այս չէ՞ նաև ձեր ունեցած քրիստոնեական հավատքը, հետևաբար ի՞նչ բանի կրնան ծառայել Քրիստոսեն Քրիստոս եղած հրավիրները, բայց միայն կասկած, վարանք և վեճեր ստեղծել հավատացյալներու մեջ, առաջնորդելու գիրենք սկեպտիկ անտարբերության, որ ծնունդ առավ այն օրեն ի վեր, եթե կներեք այս արտահայտությանս, երբ «Արտաքոյ Քրիստոսի չիք փրկութիւնը վերածվեցավ «Արտաքոյ Հռոմէական եկեղեցւոյ չիք փրկութիւն» հրամանագրին։

Բայց դուք թերևս կհրավիրեք Հայ եկեղեցին Քրիստոսեն առ Պետրոս։ Եթե այս է Ձեր միտքը, Շնորհազա՛րդ Տեր, պետք է դիտնաք թե Տերը ձգած ծառային կտանիք մեզ, վարդապետը ձգած աշակերտին կառաջնորդեք, Փրկիչը մոռցած փրկյալին կհրավիրեք, աստվածային հպատակության փոխարեն մարդկային հպատակություն ընդունիլ տալ կփորձեք, (ո՜հ, կարի է առասպելդ) Շնորհազա՛րդ Տեր, խնայեցեք մեր կորստյան։ Պե՞տք էր արդյոք, որ այս դարուս մեջ ալ դեռ լսեինք կրոնաքաղաքական սակարկության հինցած այս խոսքերը, որոնցմով անցյալին մեջ Հռոմ այնքա՞ն պատրանքի ենթարկեց ինքզինքը և ուրիշներ։

Տակավին շարունակելով մտածումին թելը, զոր Ձերդ Շնորհազարդության հրավերը կրնա անդրադարձել ու թելադրել, դուք դուցե կհրավիրեք զմեզ Բարթողիմեոսեն առ Պետրոս, սակայն այս պարագային, ինչպես նախօրոք ցույց տվինք, կհրավիրեք զմեզ նմանեն՝ նմանին, առաքյալեն՝ առաքյալին, որոնք նույն ուսումը, նույն դաստիարակությունը և նույն Ս. Հոգվո շնորհը առին, ե թե գլխավորության կամ առաջնության մտածումը առաջին մեկ օրեն արմատախիլ եղած է անոնց հոգիեն, իրենց երկնավոր վարդապետի և օրենսդրի վճռով. «որ կամիցի ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ» (Մատթ. Ի. 27)։

...Մեր խորին հավատքն է, Շնորհազա՛րդ Տեր, և այդ հավատքը մենք չենք առած ոչ Վատիկանեն, և ոչ ալ մարդապաշտ պետրոսականներեն, այլ Ավետարանեն, և անոր մեծ հեղինակ, նույնինքն Հիսուս Քրիստոս Աստուծո Որդիեն, մեր եկեղեցվո գլուխեն, որուն փառքին համար մենք մարտիրոս ազգ ենք կոչված պատմության մեջ, թե բոլոր այն հայերը, որոնք որևէ ատեն, ըլլա անցյալի, ըլլա մեր օրերուն, կթողուն իրենց Մայրենի եկեղեցին ուրիշ եկեղեցիի մաս կազմելու համար, կամ ճանչցած չեն լիովին իրենց եկեղեցին, կամ հրապուրված են աշխարհային նկատումներե, կամ բռնարարված, և կամ կրոնը իրենց համար նշանակությենե զուրկ իրողություն մրն է եղած։

Նպերելի չե՞ք գտներ, Շնորհազա՛րդ Տեր, շահասիրական ոգիով շարժող այս անարժաններու ընթացքը, նույնքան և ավելի զզվելի չե՞ն կրոնի անունով ի գործ դրված այս կարգի միջոցները։ Մարդոց տկարություններն ու հակամիտությունները շահագործելու այս անխղճությունը Հռոմի եկեղեցիին գլխավոր զենքերեն մին եղած է ու կմնա տակավին։

Քիչ ազգ կա, որ իր գոյության համար այնքան համառ ու երկարատև կռիվ մղած ըլլա քան հայ ազգը, և այդ պայքարը եթե իր արտաքին ճակատին վրա չէ պսակված միշտ հաջողությամբ, իր ներքին ճակատին վրա եղած է ավելի խոր, սրտառուչ, և փառազարդած մեր դարերը արվեստով, հոգիով և գեղեցկությամբ։

Անցյալի բոլոր հզոր պետություններ ինկած ու փշրված են պատմության ճամբուն

վրա, առաջին՝ արտաքին հզոր ուժի մը հարձակումն, որուն չեն կրցած դիմադրել, երկրորդ՝ երբ ներքնորեն, այսինքն բարոյապես քայքայված ու հյուծած են այլևս։ Այս վերջինը մեր մեջ շատ զորավոր եղած է, և ատիկա շնորհիվ մեր քրիստոնեական խոր հավատքին և ինքզինքնուս հետ հաշտ ըլլալու անառիկ իգձին և իրավունքին։ Նոր չէ, որ մենք զոհեր տված ենք այդ ճամբուն վրա ուրացողներու, ազգադավերու, իրենց մորթը ազատողներու, հեռավոր ու շրջմոլիկ փառքերու ետևեն վազողներու. անփառունակ թափորները միշտ բաժնված են ազգային ամբողջութենեն և մեր եկեղեցիին փառքեն, ուրիշ փարախներու մեջ փնտռելու ակնկալված հանգիստը, շահը, պաշտպանությունը, ի դին և ի հեճուկս իրենց ազգին և անցյալին։ Վատիկան նոր չէ, որ մարդերը ծիրանի պատանքին մեջ փաթթել կփորձե, ուր կենչեն մեռած աստվածները։

Հոգեկան այս իրողություններեն մեկնելով, կհավատանք թե Հայ Եկեղեցին այն գերագույն վայրն է՝ ուր Հայ մը ինքզինքը ամենեն ավելի հարազատ կզգա իր եղբայր հայուն, Հայ Եկեղեցին ամեն ժամանակվան մեջ և դեմ՝ այն հոգեկան և նույնիսկ նյութական կազմակերպությունն է, ուր հայ հոգին կրնա պաշտպանվիլ արտաքին ազդեցություններե, այն բեմը՝ ուրկե հայ հասարակությունը կրնա հաղորդվիլ իր ժողովուրդի իրական դրամային։

Հայ Եկեղեցին, ըստ ինքյան, կրոնական հաստատություն մը ըլլալով 'հանդերձ, իր մեջ միշտ տիրական պահած է ազգային հանգամանքը։ Այս կնշանակե թե կրոնը նույնացած է իր ընկերային կյանքին հետ։ Ասիկա երևույթ մըն է մեր ազգային պատմության մեջ, գեղեցիկ ու սրտառուչ, և ցույց կուտա թե Եկեղեցին անհատական շրջանակի մեջ, շեղոքացուցիչ ազդակ մը չէ եղած հայ ժողովուրդի զավակներուն համար, այլ իրական և միացուցիչ կապ մը՝ ինչպես կրոնական հավատքի, նույնպես ընկերային կյանքի հարաբերության և համադրության մեջ։

Հակառակ քաղաքական պայմաններու ստեղծած անդրհին, հայ ժողովուրդի քրիստոնեացումը և քրիստոնեական սկզբունքներուն կյանքի վերածումը՝ այնպիսի իրողություն մըն է, որ մեր պատմության մեջ կմնա իր եզական և ինքնուրույն հանգամանքով։

Առաջին այն օրեն, երբ մեր տոհմային զգացումը փոխակերպվեցավ ազգային գիտակցության քրիստոնեության լույսին ներքև, չանցավ մեր կյանքեն դար մը, որ քաղաքական փոթորիկները մեկե ավելի անգամներ հիմնովին չարսեին մեր գոյությունը. բայց շնորհիվ մեր հոգեկան ներզոր տվյալին, կրցած ենք միշտ վերստին ժողվիլ մեր նշխարյալ մասերը և հավատարիմ մնալ մեր ներքին արժեքներուն, ու չփոխել զայն, Շնորհաղա՛րդ Տեր, օտարացնող և խորթ ազդակներու հետ։

«Ազգային Եկեղեցի» հորջորջումը կրոնական ստորոգելի մը չէ մեզի համար. հակադրված Քրիստոսի Եկեղեցիին, ինչպես այնքան չարամտորեն կջանան, իրը թե պախտրակել մեր հոռմեադավան եղբայրները. զրկված այլևս հավիտյան իր բարիքեն, կրկնելով իրենց կիսկատար սովորած ու ձևական տարողություն մը ունեցող աստվածաբանական եզրերը։

Եթե Եկեղեցին հավատքի կյանքին կազմակերպյալ վարչությունն է աշխարհի վրա, մեր Եկեղեցին ազգային կկոչվի, ոչ թե աստվածաբանական տարողությամբ մը բառի, այլ պատմական հասկացողության մը մեջ ըմբռնելով զայն։ Այդ կառույցին մեջ ազգը գործիք եղավ, քրիստոնեությունը՝ զորություն։

Մենք հպարտ ենք մեր Եկեղեցիով, Շնորհաղա՛րդ Տեր, Հայ ժողովուրդի ամենամեծ ստեղծագործությունն է ան, դարերու պատմական և քաղաքական պայմաններու մեջեն ձև ու կերպարանք առած, սնած, զարգացած, գործած, նահատակված, անաղարտ պահելու համար իր ժողովուրդի հոգևոր դեմքը և Ավետարանեն ստացած ժառանգությունը։

Եկեղեցին, իբրև աստվածային և ընդհանուր սկզբունքներու վրա կանգնած հաստատություն, պետք է հեռու մնա այն բոլոր իմացումներեն՝ որոնք որևէ կողմով կամ կերպով քաղաքական և մասնակի մտածում մը կշոշափեն։ Ասոր հակառակ սակայն, կրոնական ստորոգելիի մը չափ սիրելի է ան մեզի, զոր տեսակ մը ցեղային բնազդով ուզեր ենք, որ ան հյուսվի մեր կրոնական կյանքին։

Այս երևույթը, ինչպես մակաբերելի է, մեր մեջ կկանխե նախնական Եկեղեցվո իր ընդհանրական միությունը կորսնցնելու շրջանը, երբ Արևմտյան և Արևելյան Եկեղեցիները հասկնալի ձգտումը ունեցան մասնավոր հորջորջումներով առանձնավորելու իրենց դիմագիծը կամ նկարագիրը։

Լատինականը նախընտրած է որակել ինքզինքը կաթոլիկ (ընդհանրական), Հունականը որդեգրեց ortodoxu (ուղղափառ), մին իրրև մտասևեռում ունենալով հռոմեական լայնածավալ կայսրությունը, որուն օրինակին վրա կուզեր կաղապարել ինքզինքը, և

մյուսը վարդապետական և դավանաբանական հարցերու նկատմամբ ինքզինքը միակ ճշգրիտ նկատելու հավակնությամբ։

Իսկ Ասորականը, Եգիպտականը և ուրիշ հին փոքր Եկեղեցիներ հետզհետե ամփոփեցան իրենց սոսկ ցեղական անվանակոչումին ներքև, որովհետև, հակառակ նախնական շրջաններու Եկեղեցվո պատմության մեջ բազում տեսակետներով կատարած իրենց կարևոր և փայլուն դերին, անոնց մեջ աղոտացած էր անցյալին գիտակցությունը, և քաղաքական դժբախտ պարագաներու բերմամբ, իրենց տոհմային ինքնության ամենեն բնորոշիչ նշանը՝ լեզուն իսկ կորսնցուցած, չկրցան ազգային իդեալի մը հորդ ճառագայթումին մեջ նկատել զայն։

Ի վերջո, բարեկարգական մեծ շարժումեն գոյացած Եկեղեցիները, ինքզինքը ընդհանրական դավանող դրության մը դեմ ժխտական վերաբերումներեն ծնած, ամենքն ալ ճանչցվեցան միևնույն ընդհանուր կոչումի մը տակ, բողոքական, որ իրենց պատմական ծագումը հիշեցնող բացահայտիչ մըն է լոկ։

Մերինին անվանափոխությունը կատարվեցավ, ժամանակի ընթացքին, ա՛նպիսի կերպով մը, որ կհիշեցնե վերոհիշյալներեն յուրաքանչյուրին մերթ մեկուն և մերթ մյուսին պարագան, ավելի ճիշտ՝ ամենքն ի միասին համադրաբար։ Անիկա իբր երկրանուն (Հայաստանյայց) կամ ազգանուն (Հայ) կրնա բարացուցական տիտղոսը ըլլալ մեր Եկեղեցվո. բայց մեր տոհմային զգացումին և պատմական գիտակցության տեսակետեն ա՛լ ավելի ուղիղ պիտի ըլլար ձթե մենք զայն հորջորջեինք ազգային։ Այս բառը ավելի հստակ և ներուժ բմբռնումով մը կարտահայտե ինչ որ մյուս չորսը յուրաքանչյուրն առանձնապես կամ ամենքը միասնաբար պիտի նշանակեին։ Վասնզի Հայաստանյայց Եկեղեցին այն կենդանի գործարանավորությունն է, որ որևէ ուրիշ հաստատութենե ավելի կրնա խորհրդանշել ինչ որ, իբր ոգի, իբր ձգտում և իբր նկարագիր, ամենեն ավելի ազգային եղած է և է Հայության կյանքին մեջ։

Ազգային մտատիպար, ազգային բարք և սովորություններ, ազգային լեզու և գրականություն, ազգային կյանքի իմացական և բարոյական ներդործություններ, ազգային միտք և արվեստ, ասոնք եղած են այն ազդակները, որոնք, իբրև զգացում և ներշնչում, Հայության հոգվույն մեջ կերպավորած են Ավետարանի խորհուրդը և քրիստոնեության ոգին, իրե՛նք ինքնին նախ հորինելով աստվածային ճշմարտության գերազանց կրոնին մեր մեջ ընդունարան և պահապան լինելու սահմանված հաստատությունը՝ իբրև նվիրապետական դրություն, և հետո, իրենց կարգին, անկե ընդունելով անմիջապես իրենց իսկ գոյության և հավերժացումին երաշխիքն ու հսկողությունը։

Կրոնի զգացումն ու ազդության գաղափարը՝ փոխադարձաբար զիրար ամրապնդող և իրարու հետ շարահյուսված բարոյական զույգ ուժերն եղած են մեր դարավոր կյանքի իրականության մեջ. քրիստոնեական թվականին առաջին դարեն սկսյալ, այսինքն Եկեղեցին շատ կանուխեն մեր մեջ եղած է այն ժամադրավայրը, ուր հավատքի տեսլականը և Հայրենիքի կամ ազգության իդեալը առաջին իսկ օրեն ճանչցած են զիրար և մին մյուսով ոգևորված և ամբողջացած։

Ազգին և Եկեղեցիին անբաժանելիության սկզբունքն ու ոգին խորհրդանշող ստատգրավ պատկեր մըն է տակավին այն իրողությունը, որուն համեմատ, մեր մեջ, Եկեղեցին, ժողովուրդը կամ ազգն է ինքնին։ Մեր մեջ չկա այն խիստ տարորոշումը, զոր ուրիշ ժողովուրդներ ընդհանուր առմամբ ի հայտ կբերեն, Եկեղեցվո կալվածին մեջ նույնիսկ, հոգևորականության և աշխարհականության միջև։

Դարձյալ, մինչ հոգևորականը Լատին Եկեղեցվո մեջ, զոր օրինակ, հավատո տարածման կամ քարոզության, և հունականին մեջ սրբազան արարմունքներու նվիրված պաշտոնյա մըն է, այլամերժորեն կամ առավելապես, հայ եկեղեցականը այդ երկու հանգամանքներու հետ միասին, իր ժողովուրդին պաստիարակիչը, ղեկավարը և հայրն ու եղբայրն է միանգամայն։

Մի, սուրբ, ընդհանրական, և առաքելական, ասոնք են Քրիստոսի Եկեղեցիին բուն ստորոգելիները՝ աստվածարանական իմացությամբ։ Հայ Եկեղեցին, իր հինավուրց ուղղափառությանը իրավունքով նույնիսկ, աստվածարանական տեսակետով իրավունք ունի ճանչցվելու հավետ այդ տիտղոսներուն ներքև, քանի որ հիմնված է առաքելական քարոզությամբ և միությանը, սրբությանը և ընդհանրականությանը վրա քրիստոնեական այն հավատքին, զոր ուներ Քրիստոսի Եկեղեցին՝ քրիստոնեական առաջին դարերուն մեջ։ Բայց իր պատմական նկարագիրը ներկայացնող մակդիրը պետք է ըլլա Հայոց, Հայաստանյայց, Հայկական կամ Հայ ազգային ուղղափառ Եկեղեցի։

Հայ Եկեղեցին թե ընդհանուր քրիստոնեական Եկեղեցիի և թե ազգային կյանքի մեջ, կրոնական դերեն զատ, կատարած է երկու ոլխավոր դերեր, մշակութային և քաղաքական. և այս զույգ շարժումները կերպա-

րանք առնել սկսած են քրիստոնեության մեր մեջ քարոզվելու օրերեն։ Սակայն Հայ Եկեղեցվո ամենամեծ արժանիքը իր ինքնատպության և ազգային գոյության խարիսխ ծառայելուն մեջն է, իր այլյունով թոմբ հանգիստանալով բոլոր ներքին և արտաքին խուժումներուն։

Եկեղեցին այդ տրտում օրերուն եղավ նույնպես մեր հոգևոր Հայրենիքը։ Եթե հանախ մեզի պակսեցավ հայրենի երկրի և պետական կազմակերպության միությունները, մենք ունեցանք մեր արյան, մեր լեզվի, մեր պատմության, մեր կրոնի, մեր ավանդությունների միությունը, ինչպես ըսինք մեր հոգևոր Հայրենիքը։

Քաղաքակրթության կյանքով ապրող ժողովուրդներու համար, կա նյութական Հայրենիքեն դուրս, հոգեկան Հայրենիքը, որ ժողովուրդի մը մշակույթն է, անցյալ քաղաքակրթությունը։ Հայ ժողովուրդի հոգևոր Հայրենիքը Հայ Եկեղեցին է, որովհետև հայուն գիտակցական քաղաքակրթությունը կսկսի քրիստոնեության հետ, և հայ արվեստը կծաղկի ու կկազմավորվի քրիստոնեությամբ, մանավանդ երբ դժնդակ պարագաներու բերումով մեզի զլացված է նյութական Հայրենիքի բարիքը, ըլլա անիկա օտարության ջուրերուն՝ ըլլա մանավանդ մեզի չպատկանող Հայրենիքին մեջ, մեր գերության օրերուն։ Հայ Եկեղեցին, մեր հոգևոր Հայրենիքը, փոխարինած է զայն և իր ուխտի տապանակ, իր կրոնական իդեալ, առած է մեզ իր ծոցը և արծարծած ու պահած մեր ներքին կյանքը։

Անհայրենիք, կամ գերի ժողովուրդ մը կրնա ապրիլ իբր ազգ, երբ ունի կրոնական իր իդեալը։ Դիտելի է և արժանի նկատողության, որ մեր մեջ քաղաքական կյանքի դրությունը, իր ամենեն հաջող և ամենեն նվաղ օրերուն միշտ անբաժան մնաց կրոնական իշխանությենեն։ Հայրապետական Աթոռը՝ Հայ Եկեղեցվո ամենեն սրտագրավ նշանը, կիսոխադրվեր հոն՝ ուր կկազմըվեր պետական ոստանը։ Այս երևույթը թավական չէ բացատրել մի՛միայն կառավարական-վարչական շարժառիթներով. անոր բուն պատճառը պետք է փնտռել այն կրոնական և դաղափարական ոգիին մեջ, որ սկիզբեն ի վեր տարբացած այս ժողովուրդի նկարագրին մեջ, քրիստոնեական թվականեն ասդին ավելի տիրական ներգործություն մը դարձավ անոր հոգվույն։

Իրապես տիտանյան կամքով և ոգիով զրահված մարդեր պետք է եղած ըլլան մեր Եկեղեցվո բոլոր ժամանակներու ներկայացուցիչները։ Ո՛ւր է դաղտնիքը այն դարերուն, որոնք մեր ստեղծումին շրջաններ եղան, և այն դարերուն՝ երբ զանոնք վտանգեն և նավաբեկություններե խլելու և անոնց վրա դուրգուրալու հիացքն է կազմած։ Պետք է զգալ իրապես ինքնաճանաչման և ինքնակոչման այն անդիմադրելի գերաճումը և անոր արժեքի գիտակցությունը, որ Հայ Եկեղեցիին և հայ հոգիին է եղած։

Մեր գրականությունը, որ կրոնական եղավ ոչ միայն իր ծագմանը մեջ, այլ նաև՝ հընդհանուրս՝ իր երկար շարունակությանը միջոցին, իբրև տեսակ մը «խօսք ընդ Աստուծոյ» մեր ազգային և ընկերային կյանքը, որ քրիստոնեական գիտակցությամբ լուսավորված, արդարության և ազատության հետապնդությունը եղավ շարունակ դարավոր տաժանքներու մեջեն, մեր ցեղային և եկեղեցական ինքնությունը, որուն զգացման մշակումին գլխավոր գործիքը Եկեղեցին մնաց միշտ, այս ամենը — գրականություն, ազգային կյանք և Եկեղեցի — որոնք մեր սիրտը ավելի սեեռեցին դեպի մեր հոգվույն մեջ բացված կրոնական իդեալը, հայ կղերին կպարտինք գլխավորաբար։

...Վեպ չէ և ոչ ալ առասպել թե Ազգային Եկեղեցիի ուրացումը ապազգայնացման դուռն է բացած միշտ մեր առջև։ Այս տխուր ճշմարտությունը մեր մեջ հաստատված է և կհաստատվի քրիստոնեության Ե. դարեն մինչև դեռ մեր օրերը։ Փոքր ի շատե մեր պատմությունը սերտողները, գիտեն թե նախ բյուզանդական և ապա հոմանական մոլեռանդությունը քանի՞ հազար և բյուր հայեր կորզելով իրենց Ազգային Եկեղեցվույն ծոցեն՝ սուզած, ընկլուզած է զանոնք իսպառ օտարացումի վիհին մեջ։

Ինչ որ Հայ Եկեղեցին ըրած է անցյալին մեջ և կընե այսօր իբր ազգային գործ՝ պահանջքն է իր հոգիին։ Սակայն այն հայերը, որ կհեռանան Հայ Եկեղեցիեն, իրենց ներշընչումն ու ուղղությունը կառնեն ուրիշ ոգիե մը, ինչ որ ալ ուզենք ըսել, խոժոռ կնայի մերինին։ Մասնավորելով հոս մեր խոսքը կաթոլիկությանը համար, չենք կրնար հոս չհիշել արտակարգորեն անիրավ և անրավարար այն միգը՝ զոր ըրած է այն շարունակ և կընի իր մարդասիրության ծուղակն ինկած տկար ժողովուրդները ապազգայնացնելու համար, այդպիսիներուն հանդեպ իր սուրբ գործն է սրբել, ջնջել անոնց ցեղային անունը և անգամ ազգության մը պիտակին տակ ազգայնապես կորսնցնել զանոնք։

Անշուշտ չենք կրնար անոնց մեջ ուրանալ հայ արյունը և հայ ոգին, այլ մատնանշելու իրականությունն մը միայն, ազգայնության գաղջությունը, որ կխորհինք թե ամեն

րանն ավելի հետևանքն է հռոմեական ապազգայնացնող ոգվույն, որուն դիմակալելը միշտ գերագույն ճիգն է եղած մեր ազգային առողջ գիտակցության։

Ո՛չ մեկ գիտակից հայու համար գաղտնիք է թե Հայ ժողովուրդի ինքնությունն ու ճըշմարտությունը իր Եկեղեցիին մեջ կմնան բյուրեղացած, այն հաստատությունը՝ զոր մեր պապերը քար առ քար կառուցին համիտենականին և անցավորին ընդմեջեն։

Եթե մեր Եկեղեցին մեկ է մեր հանրության հետ, եթե Հայ Եկեղեցին մեր ինքնուրույնության միակ պաշտպանն ու հովանին է, ասիկա Եկեղեցիին նպատակը չէ եղած, այլ անոր մասնակի մեկ հանգամանքը՝ իր գործունեության պարագաներեն հառաջ եկած, մերթ ալ ի չգոյե ուրիշ ավելի ատակ ազգայնական հաստատության մը, զոր հնար չէ եղած սնուցանել քաղաքական դժբախտության հետևանքով։ Սակայն այս հանգամանքը ո՛չ ժխտումը և ո՛չ ալ թերացումն է Եկեղեցիի բուն առաքելության, որ գերազանցորեն կրոնական է։

Տակավին՝ Հայաստանյայց Եկեղեցին այն վայրն է, ուր կրնան ժամադրվիլ մեր ժողովուրդին ամենեն ազնվական հատկությունները, ոգեղեն արժեքները, զմայլելի իր շինարար ընդունակությունները. կարճ՝ այնքան անգամներ ինքզինքը իրագործած, այնքան վտանգներեն իր նավը ազատագրած, խելոք, ողջմտությունը, պայմաններուն հարմարելու իմաստությունը, ինքզինքը այլեւ չկորսնցնելու գեղեցիկ պատեհությունը, որոնցմով զինավոր է մեր ժողովուրդը, իր Եկեղեցվո շքեղ կերպարանքին տակ շինելով իր պատմությունը գալու համար մեր օրերուն։

Հայաստանյայց Եկեղեցին մեր մայրն ու դայակն է եղած դարերով, և կմնա նույն այս օրերուն մանավանդ։ Անկե հեռանալը, անկե խորթանալը հերքումն իսկ է մեր պատմության, մեր հոգիին, մեր ազգության, ու վերջապես բոլոր այն բաներուն՝ որոնք արտահայտություն կկազմեն հայության ինքնության։ Ազգությունը ոգի մըն է, մեր ազգային ոգին մեր Եկեղեցիին մեջ միայն կրնա ապրիլ։

Հակառակ այս վսեմ և ամբողջական իրողությանց, Շնորհազարդ Կարդինալը մեր Եկեղեցվո ազգային նկարագրի մասին արտահայտվելով. զայն յայիկ կկոչե, և զանցառու իր հոտի կրոնական դաստիարակության։ Տակավին՝ ըստ իրեն, Հայաստանյայց Եկեղեցին Հայրենիքեն ներս և դուրս յծվեր է հարազատ քրիստոնեության լույսը մարելու ազգին մեջ, թե մեր Եկեղեցվո լայնախոհությունը զանցում մըն է ճշմարտության, ու

դեռ այս կարգի շա՜տ մը կարկտան ու ճըռճըռան ամբաստանություններ։

Ճիշտ է արդարև, Շնորհազա՛րդ Տեր, թե քրիստոնեությունը առհասարակ ընդհանրական նկարագիր մը ունի, թեև իր հովանիին տակ ապրող ժողովուրդներու առանձին գոյության հակառակ չէ, ընդհակառակն սատարող անոնց առանձնավորյալ գոյության պահպանումին։ Քրիստոնեությունը իբրև հոգիի և խղճի լուսավորության կրոն գերազանցապես, իրեն կապված ժողովուրդներու մեջ քաջալերած և մշակած է միշտ մտավորական և ընկերային ազատության ձգտումները, ամենուն ալ մասնավորապես առիթ դառնալով ունենալու իրենց սեփական գիրը և գրականությունը։ Այս տեսակետով հայոց, վրաց, աղվանից, ասլավ ցեղերու գրական և ազգային կյանքերուն ժամանակակցորեն գոյավորումը և կազմակերպությունը պատմական իրականություն է Արևելքի մեջ։

Նույնը կարելի է ըսել նաև Արևմուտքի այժմյան շատ մը ազգերու համար, որոնց մեջ սեփական դրականության և ազգային քաղաքական ուրույն կյանքի միաժամանակ առաջացման փաստը կարելի չէ անտեսել։

...Գալով Եկեղեցվո ազգայնացման գաղափարին, ո՛չ այլ ինչ է ան, ինչպես ըսինք, բայց եթե ազգի մը իր ինքնությունը իր Եկեղեցիովը պահպանած կամ փրկած ըլլալու գիտակցությունը ինքնին։

Ազգային կկոչենք Հայ Եկեղեցին, Մեր Սուրբ և Առաքելական Եկեղեցին, ինչպես է արդարև, ո՛չ թե ասավածաբանական տարրողություն մը տալով անշուշտ այդ բառին, ինչպես Շնորհազարդ Կարդինալը փորձելով հանդերձ կյարափոխե, գի Եկեղեցվո չորս ստորոգելիներեն ո՛չ մին է ան, այլ պատմական հասկացողության մը մեջ միայն ամփոփելով զայն։

Հայությունը, այսինքն հայ ժողովուրդին ազգային ինքնապահպանության ցեղային ոգին կազմակերպեց Հայաստանյայց Եկեղեցին՝ Ավետարանի հոգեկան և բարոյական ազատության շունչովը միայն։ Կառուցումի այդ նվիրական ձեռնարկին մեջ ազգը եթե գործիչը կամ ավելի ճիշտ՝ գործիքը եղավ, քրիստոնեությունը եղավ անոր զորությունը։

Լուսավորչեն առաջ, շուրջ երեք դարեր, քրիստոնեությունը առաքելական քարոզությամբ տարածված և հաստատված էր Հայաստանի մեջ. իրողություն է այս՝ անառարկելիորեն ապացուցված։ Բայց նույնքան իրական և ստույգ է թե Ավետարանի հավատքը, իբրև կազմակերպված դյուրություն, իբրև ուրույն նվիրապետություն, իբրև Հայոց Եկեղեցի, իր գոյությունը կսկսի Լուսավորչի

օրեն, ան մանավանդ եղած ըլլալով զայն իր այդպիսի ինչ կազմակերպող և կնքող առաջին ձեռքը։

Լուսավորչի տեսիլքին նկարագիրն ինքնին կհայտնե, որ Հայ Եկեղեցին, իր կազմութեան առաջին օրեն իսկ, զինքը ծրագրող մտքին մեջ դոյացվեցավ իբրև ազգային Եկեղեցի. այսինքն իբրև կրոնական հաստատութիւն մը, որուն կոչումը պիտի ըլլար նաև, քաղաքականապես վտանգված ազգի մը գոյութիւնը ապահովել և ամրապնդել, բարոյական և հոգևոր փրկութեամբ։

Այս սկզբունքը քայլ առ քայլ բայց միշտ ավելի աճեցուն արդյունավորութեամբ գործադրվեցավ, Լուսավորչի և իր արյանառու հաջորդներուն օրով հետագա երկու դարերու ընթացքին, նախ՝ Ս. Վրթանեսի ժամանակ, երբ ազգին համար քրիստոնեական հավատքով նահատակված քաջերը իր հրամանավ սրբոց կարգը դասվեցան. հետո, Ս. Ներսես Պարթևի ատեն, Եկեղեցվո իշխանութիւնը, բարեգործական հիմնարկութեանց հաստատումով՝ ազգին բարոյական կյանքը ուժավորելու մեծ գործին լծվեցավ անձնվիրութեամբ. և ի վերջո Ս. Սահակի և Ս. Մեսրոպի թվականին, երբ ազգային վերակենցաղումի ոսկեդարը հրաշակերտվեցավ հայերեն գրերու գյուտով և Հայ գրականութեան ստեղծումով և մշակութեամբ։

Եվ այս ամենը, Լուսավորչի տեսիլքեն մինչև Սահակի տեսիլքը, ազգային տեսլականին իրականացման համար թափված բոլոր ճիգն ու ջանքը կատարվեցավ Վաղարշապատի, Արշակունյաց այս վերջին մայրաքաղաքին մեջ, որ երկնային տնօրինութեամբ հիմա կլիներ այսպես առաջին քաղաքամայրը ազգին նվիրապետական իշխանութեան, և ատով իսկ՝ հոգևոր արգանդ վերածնութեան բովանդակ Հայութեան։

Հայ զգացման և հայկական պատմութեան համար հավասարապես, սկիզբեն՝ մեծ, և հետզհետե ավելի գեղեցիկ եղած է ան, Էջմիածին։ Առասպել կամ դիցավեպ չէ բնավ ինչ որ այս պզտիկ բայց շքեղ բառը կնշանակե իր ծոցին մեջ, այլ առնվազն ապրված մեկ տեսիլքը լուսավոր մեծ սրտի մը, որուն մեջ իր ցեղին մեծ հոգին ապրեր էր օր մը հզոր բարախումներով։ Իր ապագային խորունկ ու անթեք հավատքը ունեցող ազգի մը հոգեբանական ամենեն կարևոր մեկ պահը եղած է այդ տեսիլքի երևնումին վայրկյանը։

Սուրբին արցունքներեն՝ այսինքն ազգին վիշտեն իր բոցին սնունդը առնող կանթեղը, ազգային հույսը, ժողովուրդին երևակայութեան մեջ անշեջ մնաց միշտ Արագածի բարձունքին վրա. ու Էջմիածին, սգավոր հաճախ բայց որդեսեր մայր, իր զավակներուն՝ ի Սիյուոս աշխարհի ցրված հայութեան խոսեցավ միշտ իր հիշատակին քաղցրութեամբը, իր ավանդութիւններուն սրբութեամբը, իր մյուռոնի շողակաթ օծութեամբը, իր սրբատառ կոնդակներով, իր հայրենաքարոզ նվիրակներով, իր շնորհաշխութիւններով և իր բոլոր սրտագրավ առնչութիւններով։

Սահակ-Մեսրոպյան շարժումը, զոր պատմական անգիտութեամբ մը, Նորին Շնորհաղարդութիւնը կաթողիկե շարժում կնկատե, ուրիշ քան չէ, բայց ազգային շարժում մը ապազգային և հակահայ տրամադրութիւններուն դեմ։ Այդ մաքառման պտուղը և անոր կլխավոր զենքը եղավ հայ տառերու գյուտը։

Ի՞նչ էր Սահակ-Մեսրոպի այդ գործը, որ կուգար Հայուն բերելու անհատական և ազգային դրոշմ, հոգեկան բովանդակութիւն և նկարագիր։ Այն ինչ որ կպակսեր մեր նախորդ դարերուն։ Հայ Աստվածաշունչ, Հայ Գրականութիւն և Հայ Մեսս, ահա առանցքը ազգային և կրոնական նոր շարժումին։

Անոնք, որոնք մտքի, ճաշակի կամ ստամոքսի ախտով ցավագար՝ կրոնի և ազգի միասնականութեան մեջ թույն կտեսնեն, պիտի չկարենան երբեք հասկնալ և գնահատել՝ Ե. դարը, որ մեր Եկեղեցվո ազգայնացման և հայացման ոսկի շրջանն է։ Եթե նախորդ դարու նշանաբանը Հայը քրիստոնյա դարձնելն էր, Ե. դարուն նշանաբանը դարձեր էր քրիստոնեութիւնը հայացնել։ Ե. դարու հոգևոր և ազգային հաղթանակը, պահանջն է ուրեմն Հայ ցեղի ընդդիմամարտ կորովին, ինքնատիպ և ինքնաբավ ըլլալու իր ներքին և անառիկ իղձին. և մանավանդ ազգայնացած քրիստոնեութեան հաղթանակին, վտարելու համար ասորա-հունական ազդեցութիւնը, և թումբ կազմելու պարսկական ներքին դավադրութեանց դեմ։ Ինչ որ հայկական էր կգնահատվեր, գրաւչություն կստանար։ Անկախութեան կորուստը հաճախ ծնունդ կուտա այս կարգի բուռն հայրենասիրութեան, նման հիվանդին, որ առողջության կտենչա։

Աստվածաշունչի հայերեն թարգմանութիւնը ծնունդ կուտար Հայ Սեպին, և Մեսը անհաշտ թշնամին է բաժանումի, իրագործումը միաձույլ, միասիրտ, միախորհուրդ Մենքի, այսինքն ազգային և ուրույն կազմակերպության մը։ Ասորական և հունական ազդեցության շնչումը բերող այս նոր զենքը իբրև հաղթական գիտակցությունը հայության, պիտի գիտնար և կարենար այլևս ծառանալ օտարին դեմ երբ ժամը հնչեր, այդ օտարը ըլլար պարսիկը, հույնը կամ հռոմեացին։

Օտարոտի և օտարացնող գրին դեմ գիր,

Աստվածաշունչին դեմ Աստվածաշունչ, ծեսին դեմ ծես կանգնելով, Սահակ-Մեսրոպ դարբնեցին Հայ Մենք, առով դարբնեցին մեր ուրույն Եկեղեցին — Ազգային Եկեղեցին:

Եթե կա բան մը, որ անվիճելի է Հայ ժողովուրդի կյանքին մեջ՝ անոր հաճախակի պոռթկումն է իր հոգեկան անկախությունը գտնելու համար։ Ոսկեդարը կխորհրդանշե Հայ ժողովուրդի բացառիկ ճիգը թոթափելու համար օտար մտքին լուծը, և ստեղծելու իր հոգեկան անկախությունը։ Պատմական պահանջի այս հարկադրանքը կուգա ապացուցանելու թե Հայը գաղափարները ներծուլման ենթարկելու և համադրելու զորություն մըն է, և ոչ թե օտարամուտ գաղափարներու ազդեցության ներքև տարրալուծող տկարություն մը։

Իսկ գալով մեր Եկեղեցվո լայնախոհության, զոր Շնորհազարդ Կարդինալը տարօրինակ հոգեբանությամբ մը, չբսելու համար ստրկամտությամբ, ճշմարտության գանցում կնկատե, Հայ Եկեղեցվո մտքին փառքը և հոդին հաղթանակն է, և մեր ցեղային նկարագրի առանձնահատկություններեն մին։ Հայ Եկեղեցին ազատամիտ է նախ ուրիշ Եկեղեցիներու հանդեպ, սակայն իր ազատամտությունը սանձարձակ ըլլալե ավելի պահպանողական է, որուն ամենեն փայլուն և հեղինակավոր ներկայացուցիչն է Ներսես Շնորհալին։

Հետո որևէ հաստատություն երբ զուգընթաց չի քալեր ժամանակին հետ և ճշմարտության մեջ, շատ բան կկորսնցնե իր մասնահատկություններեն։ Քրիստոնեությունը գիտցած է միշտ հաշտ կենալ իրմեն առաջ դոյություն ունեցող լավիմաց գիտության և իրմեն հետո սկսած մտավոր շարժումներուն, յուրացնելով և ներձուլելով հաճախ անոնց էական, ճիշտ և առողջ գիծերը, ավելորդ դարձնելով այսկերպ նոր ուղղությունները, ասպարեզին վրա մնալով իբր միակ հաղթականը։ Քրիստոնեությունը իր զորությունն ու հաղթանակին պատճառը կպարտի իր այս ընդունակության։

...Հայ Եկեղեցվո հավատավոր ու արի բոլոր առաջնորդները այն համոզումը ունեցած են միշտ, թե ինչ որ խորապես սուրբ է և նվիրական, ինչ որ բանավոր է ու աստվածային՝ որ կրնա ներգործել ուղիղ և առողջ մտքերու վրա, ինչ որ կազնվացնե մարդը, անիկա տևական է միշտ. ո՛չ գիտությունը կմաքառի անոր դեմ, ո՛չ քաղաքակրթությունը կրնա ընդոտնել զայն, և ոչ ալ անկրոն մոլեռանդությունը կրնա զայն կոխոտել։ Հայ Եկեղեցին իր բոլոր հարազատ ու հավատացյալ զավակներուն հետ միասին գիտե թե ինքը գտած է իր Եկեղեցիով «ծածկված գանձը», և ընտրած «բարի մասը», որ զինք պահած է ցարդ և պիտի պահե հավիտյան։

Մենք հպարտ ենք, Շնորհազա՛րդ Կարդինալ, ոչ միայն մեր ազգային Եկեղեցիով, որ Հայ ժողովուրդին ամենամեծ ստեղծագործությունն է, դարերու ընթացքին մեր պատմական և քաղաքական կյանքի պայմաններու մեջ ձև ու կերպարանք ստացած, սնած, զորձած և նահատակված, իր ժողովուրդի հոգևոր դեմքն ու Ավետարանեն ստացած ժառանգությունը պահպանելու համար, այլ նաև մեր Եկեղեցվո ազատամտությամբ, որ Հռոմեական Եկեղեցվո քարացած անշարժության դեմ, «վեմ» բառ այս իմաստով միայն կրնա հիմ ծառայել Ձեզի Շնորհազա՛րդ Տեր, կատարյալ հառաջդիմություն մըն է։

Իսկ Ձեր այն հավաստումը թե «Հայաստանյայց Եկեղեցին Հայրենիքեն ներս և դուրս յԹվեր է հարազատ քրիստոնեության լույսը մարելու ազգին մեջ», ամբաստանություն մըն է, որ պատիվ չի բերեր այդ հայտարարությունը ընողին։ Հայ Եկեղեցին անհավատ է անոր համար, որ Հռոմեական Եկեղեցիի նման չի՞ ցանցեր իր մարդասիրության ուռկանները ուրիշ քույր Եկեղեցիներու հավատացյալներուն դեմ, հանուն ընդհանուր Եկեղեցվո միության պիտակին, հաճախ պատառ մը հացի գինով դյուրացնելու ապազգայնացման գործը, իր արյունն ու ազգը ուրանալու անխիղճ դերին առաջնորդելով մեր ցեղին վտարանդի և ճակատագրեն զարնված բեկորները։

Հայ Եկեղեցին անհավատ է անո՞ր համար, որ հավատաքննության ատյաններ չունի, և չի մտներ սակարկությանը մեջ մարդոց խղճի և հոգիի վաճառման։ Հայ Եկեղեցին քրիստոնեության լույսը կմարե, վասնզի չի՞ զիջիր այն տրտում չարաշահություններու, որոնք հիշատակարաններ ձգելու և հակագիրեր հնտրելու արվեստը ունին ի նպաստ իրենց գերագահության։ Հայ Եկեղեցին անհավատ է, որովհետև խղճմտորեն կհարգե անհատներու, համայնքներու և ժողովուրդներու նվիրական իրավունքները, և զանոնք չի զոհեր իր նեղմիտ ու անարգ տիրապետության, և այս բոլորը հանուն ընդհանրականության և միասնականության։

Մեր ժողովուրդի նախակրթարանի աշակերտներն անգամ գիտեն այսօր թե Վատիկանի իշխանավորներն ու անոնց հլու կամակատարները Քրիստոսի հեզության հակառակ ինչ կեղծպարիշտ քռնավորներ եղած են, և քրիստոնեության շինարար ոգիին հակառակ ի՞նչ ավերներ գործած և կգործեն

տակավին, և թե հետևաբար ի՛նչ պետք է հասկնալ երբ անոնք անհավատ և հերձվածող կկոչեն ուրիշ Եկեղեցիներ։

Ու այս ամենեն հետո, Շնորհազա՛րդ Կարդինալ, կոչ կուղղեք Հայաստանյայց Ս. Եկեղեցվո զավակներուն, որ խելամտին և հաստատեն, Հայ Եկեղեցիեն հեռացածներու միջոցավ, այսինքն Ձեր միջնորդությամբ, այն միությունը, որմե իբր թե հակառակ մեր նախնյաց մենք հեռացած ենք։ Մեկ խոսքով Միություն ընդ Հռոմա Եկեղեցվույն և հնազանդություն Հռոմա Քահանայապետին։

Ուրեմն թողունք մեր Եկեղեցվո առաքելական հիմնարկությունը, մեր հոգևոր անկախությունն ու ազատությունը, թողունք մեր Եկեղեցվո ժողովրդական ոգին, որ տիպարն է նախնի դարուց քրիստոնեության, թողունք մեր ամենասուրբ դավանությունը, **թե մի է հիմն և գլուխ Յիսուս Քրիստոս**, ուրանանք մեր Եկեղեցվո հայրապետներու և վարդապետներու հեղինակությունները, ուրանանք մեր Եկեղեցվո նահատակներն ու մարտիրոսները, որոնք Եկեղեցվո **միակ և կենդանի Գլուխեն** չբաժնվելու համար թափած են իրենց վարդագույն արյունը, նզովենք մեր ընտիր և անձնդիր հովիվները, որոնք իրենց հոտին անկախությունը և ազատությունը պահպանելու համար, իբրև աննկուն ախոյաններ դիմակալած են միշտ նախ արտաքին թշնամիին, ապա Հունական և Հռոմեական Եկեղեցվո հակառակության և հրապույրներուն։ Մեկ խոսքով ուրանանք մեր շուրջ 1900 տարիներու սուրբ և մարտիրոս Եկեղեցին, որ ամենադժնդակ ժամանակներու ընդմեջեն, կարմիր պահակն է եղած քրիստոնեության՝ Ասիո մեկ խուլ անկյունին մեջ, դարերու խավարին և մարդերու նենգության և գազանության դեմ։

Այս բոլորը պիտի թողունք, Շնորհազա՛րդ Տեր, ի՞նչ ընդունելու համար, Հռոմեական Եկեղեցվո Միությո՞ւն, Հռոմա Քահանայապետի գլխավորությո՞ւն և Պետրոսի առաքելապետությո՞ւն։ Այսինքն թողո՞ւնք Աստվածայինը և ընդունինք մարդկայի՞նը, թողո՞ւնք ազգայինը և ընդունինք օտա՞րը, և ի՞նչ շահելու համար, ընդարձակելու համար Լիբանանի և Սյուրիո մեջ Ձեր իշխանությո՞ւնը թե ոչ նոր ծիրանիներու և տիտղոսներու խոստումը, որուն ի հաշիվ կգրեք Ձեր Հովվական Թուղթերը և կընեք գուցե այս հրավերը։

Ձեզի ծանոթ է Քրիստոնեական Եկեղեցվո պատմությունը, Շնորհազա՛րդ Կարդինալ, Ավետարանի գանձանակի առջևեն անցան շատ ազգեր, և պատմությունը կրնա վկայել թե յուրաքանչյուրը ինչ է ձգած հոն. անոր առջևեն անցած է նաև Հայ Ազգը ու հոն դրած իր ամբողջ ունեցածը։ Տվինք մեր արյան վերջին կաթիլը, անցանք ընդ հուր և ընդ սուր, և մեր հաճախ խորտակված ուսերուն վրա առած Աստուծո Շնչարանը, ելանք մեր պատմության Գողգոթան։ Այժմ չունինք ծիրանի և ոսկի ուրիշներ գնելու համար, բայց գոհ ենք մեր ըրածեն ու երջանիկ, զի երկնքի մարգարիտին և մեր հոգիի փրկության համար տվինք այդ ամենը, ատով ապրեցնելու համար մեր Եկեղեցին և մեր Ազգը։ Հետևաբար ինչո՞վ պակաս կմընանք, Շնորհազա՛րդ Տեր, իբրև Եկեղեցի և ժողովուրդ, այն Եկեղեցիեն՝ որուն միանալու կոչ կընեք մեզի։

Այս բոլորի փոխարեն, թույլ տվեք մեզի, Շնորհազա՛րդ Կարդինալ, և ասիկա ճշմարտորեն և ոչ թե իբրև ձև բանի, ի սրտե ցավելու մեր կաթողիկե եղբայրներու վրա, որոնք էին երբեմն ոսկր յոսկերաց և մարմին ի մարմնոյ և որոնք հայրաթենեն և մեր Ս. Եկեղեցիեն բաժնվելով եղան ու կմնան սրված դաշույններ Հռոմի ձեռքին մեջ, խոցոտելու մեր հազար անգամ պատռված կողը և կտրատելու իրենց ցեղին ճյուղերը ճշմարիտ արմատեն— Հայաստանյայց Եկեղեցիեն։ Որքա՜ն ցանկալի պիտի լինեին մեզի համար, Շնորհազա՛րդ Ծիրանավոր, եթե փոխանակ այդ կտրատող դանակին, Ձեր ձեռքին մեջ ունենայիք Բարի Սամարացիին բուժիչ բալասանը, մեր հին և նոր վերքերուն իբրև ձեթ ու գինի։ Բայց ի՞նչ ընենք, ազատ է աշխարհը, և ամեն մարդ պարտականություն մը ունի ստանձնած, յուրաքանչյուրը իր պատկանած Եկեղեցիի ոգիին ու պահանջներուն համաձայն։

## ԿՈՉ ՄԵՐԱՋՆԵՐԻՑ

Զավակունք Հայաստանյայց Եկեղեցվո որ ի Սփյուռս աշխարհի, երբ կարդաք այս տողերը, ընդդեմ նոր օրերու Կայափաներուն, որոնք՝ իբր թե հանուն ճշմարտության, իրենց զգեստները կպատռեն, անգամ մըն ալ խաչելու համար Հայ Եկեղեցին, հիշեցեք թե Ձեր Մայրենի Եկեղեցին ցեղին խղճմտանքն է, որուն պատերը իր զավակներու արյունի շաղախով են ամրացած, որուն հավատքին կանթեղը իրեններուն արցունքով է միշտ վառ։

Հիշեցեք թե Հայ Եկեղեցին է այն սրբարանը՝ ուր հայ կյանքը ամենեն ավելի մարզվեցավ դեպի բարին և կատարյալը, այն գանձարանը՝ ուր պահվեցան ու կպահվին մեր հոգիին ու մտքին շնորհները, և մանավանդ փրկության տապանը, մեր պատմության արյունոտ ծփանքներուն դիմաց։

*Երբեք մի փոխեք զայն ուրիշի ոչ մեկ արժեքի հետ, ան՝ որուն ճարտարապետը եղավ Լուսավորիչ, որուն լուսարարապետը եղավ Մեսրոպ, որուն ժիր մատովակը հանդիսացավ Սահակ, որուն աղոթող քուրմը եղավ Նարեկացին, որուն քաղցր երգիչը եղավ Շնորհալին։*

*Մի նայիք այժմու իր խեղճության, անիկա շատ դժվարություններու բախած է, բայց չէ կոտրակված, անիկա շատ փոթորիկներ տեսած է, բայց միշտ արձակած է իր լույսը իրեն հառող հոգիներուն, ու տարածած իր հովանին, որ եթե աշխարհիկ զորությամբ զինված բազուկ մը չէ եղած, սակայն հոգևոր մխիթարության և հավատքի նեցուկ մը եղած է մարմնավորապես խոշտանգված և գերված իր զավակներուն համար։ Այժմու իր տկարացած վիճակին նայելով, մի՛ խորհիք թե ան դադրած է իր բարերար դերը կատարելե։ Մի՛ նայիք իր ցնցոտիներուն, անիկա երբեմն ծիրանազգեստ դշխո մըն էր, որ իր պասմուճանին պատառներով պատեց իր զավակներուն վերքերը։*

*Սիրեցե՛ք զայն, Ձեր Մայրենի Եկեղեցին, սրբվեցեք անով, և անոր մեծության գանձերուն մեջ որոնեցեք Ձեր հոգեկան կազդույրը, պատրաստ ըլլալով եթե հարկ ըլլա, պատռելու Ձեր զգեստները և անոնց լավագույն կտորներովը հագվեցնելու և զարդարելու բովանդակ հայության մայրը։*

*Մի՛ տրտմեցնեք այդ մայրը, և մի՛ ըլլաք խորթ զավակներ Հայաստանյայց Եկեղեցվո։ Անոնք, որ նոր խնամիական կապերով իրենց հակամտության և կամ թյուր կերպով հասկցված կրոնասիրության հագուրդ տալու համար, և կամ շահադիտական նկատումներով կհեռանան Մայրենի Եկեղեցիեն, կդավաճանեն էն առաջ իրենց արյան, իրենց նախնյաց, իրենց կոչումին, իրենց ազգության։*

*Վստա՛հ եղեք, թե այն հայերը, որոնք կհեռանան Հայ Եկեղեցիեն, իրենց ներշնչումն ու ուղղությունը կառնեն ոգիե մը, որ խորթ կնայի մերինին։ Բոլոր անոնք, որոնք մարդորսական ծուղակներով ազգին ծոցեն կխլեն իր միամիտ ու հաճախ բարի զավակները, զանոնք ապազգայնացման առաջնորդելու համար հետո,՝ դավաճաններ են, և թող վստահ ըլլան թե իրենց վրա կհրավիրեն Հայ ժողովուրդի դարավոր արյան ու հավատքի բողոքը, ավելին՝ արյունապարտ անեծքը:*

*Տակավին՝ բոլոր անոնք, մեր Եկեղեցվո զավակներեն, որոնք տրտում քինախնդրության և անիմաստ խնամիության հաշիվներով, ուղղակի կամ անուղղակի, կամա կամ ակամա, զորավիգ կհանդիսանան մեր ժողովուրդի նյութական, կրոնական և ազգային այս առուծախին և կորստյան, կդավաճանեն մեր պատմության, մեր ներկային և մեր ապագային։*

*Զգուշացե՛ք, ժողովուրդ Հայոց, ո՛չ միայն ամեն կարգի գառնազգեստ գայլերե և սրբազան գազաններե, այլ նաև անոնց հետ գաղտնի խնամիացած մերայն միամիտներեն, որոնք հակառակ իրենց ներքին հաշիվներու համաձայնման և հեռավոր հույսերու ակնդետ սպասման, կամա և ակամա մեր Եկեղեցվո նյութական, ազգային և կրոնական ծառին է որ տապար կզարնեն։*

*Այս վերջինները կզարմացնեն մեզ, չունենալնուն համար մեր ցեղային նկարագրի ամենեն սրտապնդիչ գիծը, ինքնապահպանության առողջ բնազդը, և որոնք սիրտ կընեն հետևապար այս կերպով նոր վերք մը ավելցընելու մեր ժողովուրդի արդեն բազմախոց սրտին վրա։*

*Ժողովո՛ւրդ Հայոց, հագի՛ր նորեն քու դարավոր ողջմտության զրահը, իբրև մի հոտ շարունակելու քու անմեռ գոյության պայքարը։ Ամեն մասնիկ, որ կփրթի քու ամբողջութենեդ, արժեք մըն է, որ կպակսի քու հոգեկան և նյութական դրամագլուխեն։ Ով որ այս սեռն ու սերտ զգացումով չէ որ կնայի Հայ Եկեղեցիին և ազգին, կմեղանչե ցեղին ողջմտության ոգվույն դեմ. ու այդ պետք չէ թույլատրե ինքզինքին որևէ հայ, որ կսիրե իր Ազգն ու Եկեղեցին։*

*Ուշադի՛ր եղեք առաքյալի խոսքին, «Որպէս ընկալարուք զՔրիստոս Յիսուս զՏէր, նովին գնացէք։ Զգոյշ լերուք, մի՛ ոք իցէ որ զձեզ կողոպտիցէ ճարտարութեամբ և սնոտի խաբէութեամբ, որք ըստ մարդկան աւանդութեան և ըստ տարերց աշխարհի և ոչ ըստ Յիսուսի Քրիստոսի։*